



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 123 – Ա

17 մարտի 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշումը և ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 17-ի N 01/07.1/6597-20 գրությունը որոշում եմ՝

1. 2020 թվականի մարտի 16-ից, մինչև սահմանված կարգով արտակարգ դրության ավարտը, դադարեցնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական դպրոցների տնօրենների և ուսուցիչների պաշտոնի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթների անցկացումը:
2. Մրցույթների անցկացման օրերը նշանակել արտակարգ դրության ավարտից հետո:
3. Համապատասխան պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ և գործադիր կառավարման մարմիններին՝ ընդունել սույն որոշումից բխող իրավական ակտ և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:

17.03.2020



ՄԱՐԶՊԵՏ
Գ. ՍԱՆՈՍՅԱՆ



GNEL 1710830069

ք. Գավառ